

Երկխոսություն Ռուսաստանի Նախագահի թեկնածուների և հայ համայնքի միջև

Յ.Յ.Դ. Մոսկվայի Յայ Դատի գրասենյակի Նախաձեռնությամբ վերջին տասնօրյակի ընթացքում տեղի ունեցան ՌԴ Նախագահի թեկնածու, Պետական Դումայի փոխխոսնակ Վլադիմիր Ժիրինովսկու և Նախագահի թեկնածու Դմիտրի Մեդվեդևի շտաբի ներկայացուցիչ, Պետական Դումայի փոխխոսնակ Ալեքսանդր Բաբակովի հանդիպումները Մոսկվայի հայ համայնքի հետ:

Այս նախաձեռնությունը նպատակ ուներ ստեղծելու Նախագահության հավակնորդների և հայ համայնքի միջև երկխոսության ավանդույթ, ձևավորելու հայ համայնքին հուզող հարցերի քննարկման նոր մեխանիզմներ:

Յանդիպումներին մասնակցում էին հայկական հասարակական, մշակութային, կանանց, երիտասարդական կազմակերպությունների և մերձմոսկովյան քաղաքների հայ համայնքների ղեկավարներ, մոսկվահայ մտավորականության ներկայացուցիչներ, գործարարներ:

Յանդիպում Վլադիմիր Ժիրինովսկու հետ

Ռուսաստանի Նախագահի թեկնածու, Պետական Դումայի փոխխոսնակ, Ազատական-Ժողովրդավարական կուսակցության Նախագահ Վլադիմիր Ժիրինովսկու հետ հանդիպումը տեղի ունեցավ փետրվարի 18-ին, «Երևան» ռեստորանային համալիրի սրահում:

Բացելով հանդիպումը՝ Յ.Յ.Դ. Մոսկվայի Յայ Դատի գրասենյակի պատասխանատու Յուրի Նավոյանը փոխադարձ օգտակար համարեց այն, որ հայ համայնքը անմիջականորեն ծանոթանա Նախագահի թեկնածուների ծրագրերին, իսկ թեկնածուներն էլ տեղյակ լինեն հայ համայնքի մոտեցումներին:

Նա ընդգծեց, որ հայ համայնքին հետաքրքրում են ինչպես Ռուսաստանի զարգացման խնդիրները, այնպես էլ հայ-ռուսական համագործակցության հեռանկարները, Ռուսաստանի մոտեցումը հայկական ազգային հարցերին, մասնավորապես՝ Ղարաբաղյան խնդրի կարգավորմանը և հայերի ցեղասպանության հետևանքների վերացմանը:

Իր խոսքում Վլադիմիր Ժիրինովսկին կատարեց ծավալուն անդրադարձ Ռուսաստանի պատմական ուղու, համաշխարհային մրցակցության և ներկայիս աշխարհաքաղաքական դասավորումների վերաբերյալ: Նրա ելույթի հիմնական դրույթն այն էր, որ 1917 թ. Ռուսաստանը բոլշևիկների պատճառով դուրս մնաց բնական զարգացման ուղուց, իսկ համաշխարհային այն ուժերը, որոնք նպաստեցին դրան, այսօր էլ շարունակում են Ռուսաստանի մեկուսացման քաղաքականությունը:

Նա նշեց, որ Յայերի ցեղասպանության նկատմամբ աշխարհի անտարբերության պատճառը տնտեսական շահի գերակայությունն էր: Այսօր էլ տարածաշրջանում միակողմանի շահերը և նավթային

շահագրգռությունները համաշխարհային քաղաքականության ազդու պետություններին թույլ չեն տալիս պատժելու Թուրքիային և արդար լինել Ղարաբաղի խնդրում:

Ըստ Ժիրինովսկու Կովկասյան քաղաքականությունը առաջնահերթ պետք է լինի Ռուսաստանի համար, քանի որ այնտեղով է անցնում Մերձավոր Արևելքի վրա ազդեցության ճանապարհը:

Պատասխանելով Ռուսաստանում տեղ գտած այլատյացության վերաբերյալ բազմաթիվ հարցերի, Ռուսաստանի բոլոր նախագահական ընտրություններին մասնակցած թեկնածուն այն բացատրեց Ռուսաստանի վերջին երկու տասնամյակների ցնցումներով և չեչենական պատերազմով: Նա շեշտեց, որ այդ չարիքի դեմ պայքարում նախագահության չորս թեկնածուների ծրագրերը նույնն են, դրանք տարբերվում են տնտեսական և սոցիալական հարցերի նկատմամբ մոտեցումներով:

Յանդիպում Դմիտրի Մեդվեդևի շտաբի ներկայացուցիչ Ալեքսանդր Բաբակովի հետ

Պետական Դումայի փոխխոսնակ, «Արդար Ռուսաստան» կուսակցության քաղաքական խորհրդի քարտուղար Ալեքսանդր Բաբակովի հետ հանդիպումը կայացավ փետրվարի 27-ին, դարձյալ «Երևան» ռեստորանային համալիրի սրահում:

Ներկայացնելով Դմիտրի Մեդվեդևի շտաբի ներկայացուցչին, Յ.Յ.Դ. Մոսկվայի Յայ Դատի գրասենյակի պատասխանատու Յուրի Նավոյանը նշեց, Ալեքսանդր Բաբակովը միաժամանակ հանդիսանում է ռուսական մի քաղաքական կուսակցության ղեկավարներից մեկը, որը սերտ համագործակցություն ունի հայկական քաղաքական ուժի հետ:

Նախորդ տարի հաստատած համագործակցությամբ «Արդար Ռուսաստան» կուսակցությունը և Յ.Յ. Դաշնակցությունը քաղաքական նոր մշակույթի տարր են ավելացրել հայ-ռուսական միջպետական համագործակցությունում, նախադեպ հանիսանալով միջկուսակցական այլ հարաբերությունների:

Ալեքսանդր Բաբակովը ներկայացրեց «Միասնական Ռուսաստանի» և երկու այլ կուսակցությունների հետ մեկտեղ Դմիտրի Մեդվեդևի թեկնածությունը պաշտպանելու հիմնավորումները:

Նա նշեց, որ այդ քայլով ընտրվել է նախագահ Պուտինի օրով Ռուսաստանի տնտեսական առաջընթացի և միջազգային դերակատարության աճի շարունակականության ապահովման ուղին: Կարևոր նշանակություն ունի նաև Մեդվեդևի ծրագրի սոցիալական ուղղվածությունը: Նա հանդիսացել է սոցիալական բովանդակություն ունեցող Ազգային ռազմավարական ծրագրերի համակարգողը, հասել է լավ արդյունքների, որոնք պետք է նոր զարգացում ստանան:

Պատասխանելով ներկաների հարցերին Ալեքսանդր Բաբակովը նշեց, որ Կոսովոյի ճանաչումը պետք է նախադեպ լինի նաև ԱՊՀ տարածքի

չճանաչված պետությունների համար, որոնք միջազգային իրավունքի սուբյեկտ լինելու իրավական ավելի լուրջ հիմքեր ունեն:

Նա անընդունելի համարեց Ղարաբաղի խնդիրը կարգավորման ներկա ձևաչափից դուրս բերելու և միջազգային այլ ատյաններ տեղափոխելու Ադրբեջանի փորձերը: Ըստ նրա գնահատականի, այդ հարցում Ադրբեջանին քաջալերում են այն ուժերը, որոնք շահագրգռված են, որ կարգավորման գործընթացից Ռուսաստանը դուրս մղվի:

Գործնական մթնոլորտում անցած երկխոսության ընթացքում արծարծվեցին հասարակությունում անհանդուրժողականության հաղթահարմանը, իրավական ոլորտի մի շարք հիմնախնդիրների, պետական կառավարման և քաղաքական համակարգերում երիտասարդության ընդգրկմանը վերաբերող, կրթական ու դեմոգրաֆիական հարցեր: Դրանց վերաբերյալ արվեցին նաև կոնկրետ առաջարկություններ:

Ընդունելով մի շարք ոլորտներում հայեցակարգերը վերանայելու և օրենսդրական բարելավումների անհրաժեշտությունը, Բաբակովը հայտնեց Նախագահին կից համապատասխան խորհուրդներում և Պետական Դումայի հանձնաժողովներում այդ հարցերի շուրջ բանավեճեր նախաձեռնելու իր ցանկության մասին՝ կարևորելով նման քննարկումներին հասարակական ներգրավվածությունը:

Այդ իմաստով նա պատրաստակամություն հայտնեց Նախագահական ընտրություններից հետո այս երկխոսության կազմակերպիչների հետ մեկ անգամ ևս անդրադառնալ հանդիպման ընթացքում քննարկված հարցերին:

Նման հանդիպումները շարունակական դարձնելու փոխադարձ ցանկություն դրսևորվեց:

Ներկաների կողմից հնչեցին նաև հայ համայնքի ընդհանուր տրամադրությունները արտահայտող ելույթներ՝ ի նպաստ Նախագահի թեկնածու Դմիտրի Մեդվեդևի: